ՏԵՂԵԿԱՆՔ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 30. Համայնքի ղեկավարի տեղակալը

1. ~~Համայնքի ղեկավարի տեղակալը, աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներից բացի, համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է վերջինիս իրավասությանը վերապահված այլ գործառույթներ:~~

Comment [TE1]: 1.Համայնքի ղեկավարը կարող է ունենալ տեղակալներ:
2.Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը հայեցողական պաշտոն է:
3.Համայնքի ղեկավարների տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:
4.Համայնքի ղեկավարի տեղակալներն իրականացնում են համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթները:
5.Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ տեղակալներից մեկը փոխարինում է համապատասխան համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:»: